**Գործ թիվ ԵԴ2/2498/02/26**

**Քաղվածք**

**ՎՃԻՌ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

27.04.2026թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

*նախագահությամբ՝ դատավոր* Դ.ՕՀԱՆՅԱՆԻ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետև՝ Դատարան), գրավոր ընթացակարգով, քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 08420926, պետական գրանցման համար՝ 70.110.997991, հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության փողոց, շենք 41/5) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարության և ենթակառուցվածքների նախարարության (ՀՎՀՀ՝ 02815457, պետական գրանցման համար՝ 286.184.1096104, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարության տուն 3) և երրորդ անձ՝ «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի՝ (ՀՎՀՀ՝ 06001677, պետական գրանցման համար՝ 48.110.00238, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ազատության պողոտա, շենք 2, 49)՝ ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 8.2 կետը, «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու՝ որպես հետևանք «ՔՅԱՎԱՌ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությանը ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին,

**ՎՃՌԵՑ**

1. «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարության և ենթակառուցվածքների նախարարության, երրորդ անձ՝ «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի՝ ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 8.2 կետը, «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն հրապարակելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու՝ որպես հետևանք «ՔՅԱՎԱՌ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությանը ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակի՝

անվավեր ճանաչել ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 8.2կետը,

անվավեր ճանաչել «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Հայցը՝ մնացած մասով,մերժել:

2. ՀՀ տարածքային կառավարության և ենթակառուցվածքների նախարարությունից հօգուտ «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
2914920504
2026-04-28 18:43:06 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԴԱՏԱՎՈՐ Դ.ՕՀԱՆՅԱՆ